

Այցելեցին ծննդատներ

Ամանորը սպասված տոն է յուրաքանչյուր ընտանիքում, իսկ մանկան ծնունդը՝ բարի ավետիս: 2015թ հունվարի 1-ին Աշտարակի ԲԿ-ում ծնվել է 2 տղա և 3 աղջիկ: Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանն իր շնորհավորանքը փոխանցեց նորածիններին ու նրանց ծնողներին: Նրա կողմից պատրաստված նվերները մայրերին հանձնեցին մարզպետի տեղակալներ Նունե Մովսիսյանը և Մուշեղ Աբգարյանը:

Հունվարի 13-ին Նունե Մովսիսյանը ամանորյա այց կատարեց Ապարանի բժշկական կենտրոն: Նա մարզպետի կողմից շնորհավորական նվեր հանձնեց 3 նորածնի: